ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.04.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» *ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.*

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Արպանիվ» ՍՊԸ
2	«ԴԱՐՖ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում է հայտի ապահովումը:

2.3 «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Մասնավորապես, «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում է հայտի ապահովումը: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 5-րդ պարբերության համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային ընդհանուր գին	«Արպանիվ» ՍՊԸ-ի գնային առաջարկ		«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի գնային առաջարկ		Նվազագույն գին ներկայացրած մասնակից
					Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	
1	Զանազան պահեստամասեր (Կապարաթթվայի ն կուտակիչ մարտկոց 6US 190)	հատ	1342	107360000	75261597	90313916			«Արպանիվ» ՍՊԸ
2	Զանազան պահեստամասեր (Անվադող 225/75R16)	լրակազմ	962	72150000	59562230	71474676			«Արպանիվ» ՍՊԸ
3	Զանազան պահեստամասեր (Անվադող 12,00-20)	լրակազմ	620	102300000	84887300	101864760			«Արպանիվ» ՍՊԸ
4	Զանազան պահեստամասեր (Անվադող 425/85R21)	լրակազմ	408	89760000	74561320	89473584			«Արպանիվ» ՍՊԸ
5	Զանազան պահեստամասեր (Անվադող 14,00-20)	լրակազմ	522	73080000	52764630	63317556	56017995	67221594	«Արպանիվ» ՍՊԸ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ սույն ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից, իսկ 5-րդ չափաբաժնի մասով բավարար է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, գնահատող

հանձնաժողովը 16.04.2019թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 19.04.2019թ. ժամը 09[45]-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ կազմակերպել բանակցություններ: «Արպանիվ» ՍՊԸ-ն նշված օրը և ժամին չներկայացավ բանակցությունների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Ամիրյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 19.04.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ բոլոր չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց «Արպանիվ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնահատող Դ. Սերոբյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան